ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Դ.ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

ՓԱՐՊԻԻ «Ս. ԹԱՐԳՄԱՆԻՉՔ» ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2008թ. Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի միջին դարերի հնագիտության բաժնի աշխատակիցների (Ն. Հակոբյան, Դ. Միրիջանյան) կողմից իրականացվել են մաքրման եւ պեղման աշխատանքներ Փարպի գյուղի «Ս. Թարգմանիչք» եկեղեցու շրջակայքում, կապված եկեղեցու վերականգնողական աշխատանքների հետ:

Փարպի գյուղը պատմական Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի (ներկայիս՝ Արագածոտնի մարզ, Աշտարակի ենթաշրջան, Աշտարակ քաղաքի հարեւանությամբ) հինավուրց բնակատեղիներից է ուր մարդկային ձեռքն ու ստեղծագործ միտքը թողել են իրենց բազում արարումներից շատերի հետքերը: Գյուղը հայտնի է ոչ միայն պատմական տարբեր դարաշրջանների վերագրվող հնագիտական, ճարտարապետական հուշարձաններով, այլեւ իբրեւ Ղազար Փարպեցու ծննդավայր:

«Ս. Թարգմանիչք»-ը գտնվում է Փարպի գյուղի արեւելյան կողմում, բարձրադիր բլրի վրա, ամեն կողմից տեսանելի գյուղի համայնապատկերում: Հայոց եկեղեցին «Սրբոց Թարգմանչաց վարդապետաց մերոց» անվան ներքո տոնում է վեց թարգմանիչների հիշատակը, Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ:

Հայոց մեջ լայն տարածում է ունեցել Ս. Թարգմանչաց (թարգմանիչք) անունով վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, վկայարաններ, մկրտարաններ, հանգստարան-դամբարաններ, ճեմարաններ, վարժարաններ հիմնարկելը. «Շինէին եւ վկայարանս իմն անուանեալս, եւ զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, եւ յամենայն տեղիս անապատս միայնանոցս շինէին»[1], Հայոց նորօրյա տոնացույցում նշվում է շատ յուրահատուկ եւ ինքնատիպ մի տոն, նվիրված «Թարգմանչաց», որը կարելի է ասել համաժողովրդական հարգանքի եւ խոնարհումի ձոն է մեր առաջին թարգմանիչներին:

Հայտնի է, որ վկայարանները, մատուռները քրիստոնեական հավատքի համար նահատակված Ս. վկաների կամ մարտիրոսների հիշատակներին նվիրված կառույցներ են, որ հիմնարկվում էին նրանց գերեզմանների վրա, երբեմն էլ Սուրբ Մասունքներից գեթ մի մասնիկ տեղադրվում էր կառույցի հիմքում: Կնշանակի, թե Փարպիի «Ս. Թարգմանիչք»-ը եւս նման մի շինություն է նվիրված թարգմանիչներից որեւիցե մեկին, թեեւ այս միտքը հաստատող գրավոր ոչ մի տեղեկություն պահպանված չէ: «Ս. Թարգմանիչք»-ը գործառական նշանակությամբ եկեղեցի լինել չէր կարող (նրբակերտ փոքր չափերով), քանզի գյուղում ժամանակին գործել է փառահեղ եւ խոշոր մի եկեղեցի՝ հանձինս Ծիրանավորի (Ե դար):

1 «Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երեւան, 1957, էջ 60:

«Ս. Թարգմանիչք»-ը հատակագծային հորինվածքով կարելի է դասել Է. դ. քառախորան շինությունների շարքը[2]: «Հայոց 7-րդ դարու շինարարական արվեստին մեջ մի առանձին տեղ գրավելու արժանի է Փարպիում Ս. Թարգմանիչ կամ Թարգմանչաց եկեղեցի անվանված կիսավեր շենքը: Եկեղեցին իր ճարտարապետական համաչափություններով եւ ներդաշնակ դասավորություններով չքնաղ մի երեւույթ է», գրում է Թ. Թորամանյանը[3]:

«Ս. Թարգմանիչք»-ը ներքուստ եւ արտաքուստ խաչաձեւ եկեղեցի է, հենախորշերը ներքուստ կիսաշրջանաձեւ են, խաչաթեւերը միմյանց հպվում են որմնասյուներով: Արտաքուստ դրանք ուղղանկյուն են, եւ խաչաթեւերն իրար հպվում են քարե գլանաձեւ որմնասյուներով: Որմնասյուները զարդարում են հիմքում տափակ, իրանի հատվածում կիսագնդաձեւ խոյակները, հարդարված հյուսածո համակենտրոն շրջանների բազմագալար զարդաշղթաներով, որոնք մի առանձին շուք են հաղորդում շինությանը: Գմբեթատակ հիմքից դեպի թմբուկ անցումն իրականացվել է առագաստավոր փոխանցումներով, ապացույց՝ ճակատային հատվածում տրամատված գոգավոր քարի առկայությունը եկեղեցու տարածքում: Եկեղեցին կառուցված է դարչնագույն սրբատաշ տուֆե մեծադիր քարերով (չափերը՝ 1.00, 0.77մ, 0.65մ) եւ ունի միայն մեկ մուտք, այն էլ հարավային կողմում: Փարպիի «Ս. Թարգմանիչք»-ը հատակագծային հորինվածքով առնչվում է Է. դ. կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների հետ: Գմբեթատակ քառակուսու ներքին անկյունների լուծմամբ հիշեցնում է Ազարակը (Ախուրյանի աջ ափին, Տեկորի հարեւանությամբ), իսկ արտաքին անկյունների լուծմամբ՝ Ծփնիի, Արտաշավանի, Քարաշամբի եկեղեցիները[4]:

Սակայն, հետագայում (հավանորեն ԺԸ-ԺԴդդ.) եկեղեցին հիմնովին վերակառուցվել է, ձեռք բերելով ժամանակին համահունչ ճարտարապետական հարդարանքային մանրամասներ, պատուհանի երեսակալ, դեպի բեմ, Ավագ խորան տանող կիսաշրջանաձեւ աստիճաններ, քիվերի մնացորդներ, գուցե եւ մուտքի ճակատային հատվածն իր անոման զարդաքանդակներով (նկ.1): Զարդաքանդակները՝ բուսական, երկրաչափական, թռչնապատկեր, անմիջական աղերսներ ունեն Բուժականի, Թեղենյաց վանքի, Կաթողիկե եկեղեցու բեմի ճակատային հատվածի անոման զարդաքանդակների հետ (ԺԴ դ.)[5]: Ժամանակի ընթացքում եկեղեցին խոնարհվել է: Դահպանվել են խաչաթեւերի պատերը՝ մոտ 2մ բարձրությամբ (նստած որմնախարիսխների վրա): Ներկայումս եկեղեցին գտնվում է վերակառուցման փուլում (նկ. 2):

«Ս. Թարգմանիչք»-ը բոլոր կողմերից շրջապատված է ժամանակակից թաղումներով, որոնք խաթարում են ոչ միայն ճարտարապետական, գեղագիտական ընդհանուր պատկերը, այլեւ խանգարում մաքրման աշխատանքներին, արգելում դրանց ընդարձակմանը: Մաքրման աշխատանքները տվեցին զոհացուցիչ արդյունքներ: Հարավային կողմում, անմիջապես մուտքի տակ, բացվեցին սեղանաձեւ տապանաքարերի շարքեր (նկ.3): Տապանաքարերը կարմրավուն տուֆե, հղկված զանգվածեղ անզարդ սալեր են՝ տեղ-տեղ ճա-

2 Տե՛ս **Վ.Գրիգորյան**, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երեւան, 1982, էջ 15-16:

3 **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երեւան, 1948, էջ 227:

4 Տե՛ս **Վ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 15:

5 **Գ. Սարգսյան**, Թեղենյաց վանքի պեղումները, ՊԲՀ, 1990, թ. 2, էջ 180-181,183:

քեր փված: Չափերը փոփոխվում են. երկ.՝ 1.53-1.54մ, լայն.՝ 0.66-0.72մ, հաստ.՝13-14սմ: Տապանաքարերից երկուսն ունեն ենթադրյալին խորհրդանշող ռելիեֆ նշանակներ՝ գլխամասում գծաքաշ լուսապսակներ, նշան հոգևոր կոչման: Գերեզմաններում, հավանաբար, հանգչում են հոգևորականներ, միաբաններ, քանզի նման շքեղ եկեղեցի-վկայարանի շուրջ, բոլորովին առանձնացված վայրում անթույլատրելի էր հասարակաց գերեզմանատուն կառուցելը: Դեռևս Շահապիվանի ժողովն անդրադարձել է հոգևոր կառույցների շրջապատում թաղումներ կատարելու թույլատրելիությանը եւ որոշել. «Եթե ոք նշխարս մարտիրոսին կամի դնել, առանց եպիսկոպոսի աշխարհին՝ մի՛ դիցէ: Զհիշատակս մարտիրոսաց եւ զժողովս առանց եպիսկոպոսի հրամանի մի՛ ոք իշխեսցէ առնել: Եւ եթէ ոք ի սուրբ տեղացն մարտիրոսս բերցէ, առ եպիսկոպոսն բերցէ վկայութեամբք եւ թղթովք եպիսկոպոսացն՝ ուստի եբերն. եւ իւրեանց եպիսկոպոսին հրամանաւ դիցէ՝ ուր արժանն է դնել»[6]:

Իսկ Սահակ Պարթեւի կանոններում կարելի է կարդալ, թե. «եւ որպէս եղեւ անառակ սովորութիւն քահանայից եւ նոցին կանանց գերեզմանս առ եկեղեցիս առնել եւ ի տեղիսն սրբութեան, յայսմհետէ յառաջ մի՛ իշխեսցեն առնել, այլ ի ժողովրդականացն հանգստարանս եղիցին եւ քահանայիցն հանգստարանք, զի սրբութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի, ... ի գերեզմանս յեկեղեցիս մի՛ իշխեսցեն առնել, ապա եթէ գտցի ոք արարեալ, յեկեղեցւոջն պատարագ մի՛ ոք իշխեսցէ մատուցանել մինչեւ մաքրեսցեն զտեղիսն»[7]:

Տապանաքարեր բացվեցին եւ աեւմտյան կողմում (թվով երեքը): Ընդարձակվել այլեւս հնարավոր չէր: Տապանաքարերից առավել ուշագրավը տուֆե սալի կես է, խաթարված դիրքում՝ գլխամասը ուղղված է դեպի հյուսիս (շրջված հավանորեն ուժեղ ցնցումից): Գլխամասը հարդարված է գծաքաշ լուսապսակով, շրջանակված կոնաձեւ եռագագաթ սաղավարտով, նշան՝ հոգեւոր բարձր դասի պատկանելության (նկ.4): Սաղավարտն իր ձեւաբանական հորինվածքով կարծեք թե նմանակում է Սանահինի վանքի Ամենափրկիչ եկեղեցու (966 թ.) պատկերաքանդակներում՝ Կյուրիկե եւ Սմբատ թագաժառանգների կրած գլխանոց-թագերը[8]:

Տապանաքարերից մի քանիսը բացվեցին մասնակի, քանզի դրանց շարունակության վրա անմիջականորեն նստած են ժամանակակից թաղումները: Կնշանակի հեստագայում խախտվել են Հայոց Եկեղեցու ընդունած արգելակող կանոնները եւ սրբազան վայրը վերածվել է հասարակաց գերեզմանոցի:

Տապանաքարերի հարեւանությամբ, եկեղեցու արեւմտյան անկյունում, բացվեց արտաքին խաչաթեւերն իրար կապող որմնասյուներից մեկի խոյակը (նկ.5): Խոյակն ունի նույն կերտվածքն ու հարդարանքը, ինչ վերը նկարագրածը. բազմաշրջան, բազմագալար հյուսկեն շղթաներ՝ հարդարված զարդագնդիկներով: Նույն հատվածում գտնվեց եւ քարե սյան բեկոր:

Մաքրման աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ փաստել, որ եկեղեցին ներքուստ, պատերին ունեցել է որմնանկարներ: Դրանց փոքր հատվածներ այժմ էլ նշմարելի են պատերի երեսակալներին:

---

6 «Կանոնագիրք Հայոց», աշխատ. Վ. Հակոբյանի, հ. I, Երեւան, 1964, էջ 459, ԺԷ:

7 Անդ, էջ 380, խդ, 486:

8 Տե՛ս **К. Оганесян**, Санаин-Ахпат, Ереван, 1975, էջ 15:



Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

.Նկ.10

Կուտակված հողահեռացման միջոցին, հողի տակ բացվեց պատի երեսակալ քարերից մեկը՝ որմնանկարի մնացորդներով (նկ.6): Կաթնագույն ալեբաստրե նուրբ հենքի վրա պահպանված է վառ կարմիր ներկով պատած մի հատված, զարդապատկերներ հիշեցնող գարբերով: Վերջին ժամանակներս կատարված հետազոտական աշխատանքները, հուշարձանների եւ գրավոր աղբյուրների առավել բազմակողմանի ուսումնասիրությունները հավաստում են, որ դեռեւս շատ վաղ ժամանակներից խճանկարն ու որմնանկարը եղել են ճարտարապետական շինությունների ներքին հարդարանքի օրգանական տարրերից: Հայաստանը լինելով քրիստոնյա առաջին երկրներից մեկը, բնականաբար չէր կարող ակտիվ մասնակիցը չլինել քրիստոնեական մշակույթի, ճարտարապետական նոր լուծումների ու ոճական նոր ուղղությունների, քրիստոնեական պատկերագրության մշակման գործընթացի եւ դրանց կիրառողներից, համահունչ ժամանակի ոգուն, իշխող գաղափարախոսության պահանջներին: Հայաստանում եկեղեցական շատ շինություններ (Ե-Է դդ.) ներքուստ սկսեցին հարդարվել որմնանկարներով եւ խճանկարներով. «Իսկ յեկեղեցիս քրիստոնէից, եւ յարկս վկայից Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբ Գրիգոր եւ աստուածահաճոյ չարչարանք իւր»[9], քանզի ինչպես գրում է Վրթանես վրդ. Քերթողը «զայդ ամենայն նկարեն յեկեղեցիս՝ զոր գիրք սուրբք պատմեն. ոչ ապաքէն դեղով գրեալ են զգիրսն, զնոյն բանս դեղով նկարեալ է, յեկեղեցիս ի գրոցն ականջք միայն լսեն, իսկ նկարսն աչօք տեսանեն եւ ականջօք լսեն, եւ որ սրտիւքն իմանան եւ հաւատան»[10], հաստատելով այն միտքը թե. «համր նկարը պատի վրա խոսուն է դառնում (Գրիգոր Նյուսացի)», արդարացնելով որմնանկարների գաղափարախոսական ներգործության վիթխարի ուժը նորահավատ քրիստոնյաների կրոնական զգացումների վրա: Ցավոք մեզանում շատ քիչ բան է պահպանվել եկեղեցական շինությունները ներքուստ հարդարող գեղանկար ու բազմաբովանդակ այդ որմնանկարներից: Սակայն պահպանված եզակի ու փոքրաթիվ նմուշներ էլ բավարար են փաստելու, թե Հայաստանում Ե-Է դդ. ևս լայն տարածում է ունեցել որմնանկարչությունը (Էջմիածին, Տեկոր, Աղցք, Թանահատ, Երերույք, Մրեն, Դվին (բազմանիստ աբսիդ), Զովունի, Մաստարա, Լմբատավանք, Կարմրավոր, Աշտարակ, Արուճ եւ այլն): Որմնանկարների մնացորդները մեծ մասամբ պահպանված են գունաշերտի հետքերով, ինչպես Թարգմանիչքում:

Եկեղեցու արեւմտյան կողմում, պատահաբար գտնվեց գմբեթը թմբուկին կապող գոտու քարերից մեկը (երեսով թաղված հողի մեջ, հարդարված երկրաչափական գեղաքանդակ ձեւերով): Զարդաձեւերն ունեն նույն կերտվածքը ինչ խոյակները (նկ.7): Սրանք մանրամասներ են, որ թույլ են տալիս ենթադրել, թե դրանք նույն վարպետի գործ են եւ պատկանում են նույն ժամանակին:

Գրածոներ- խեցանոթների բազմաքանակ բեկորներ են, գտնված քարե խճի եւ հողի բազմաշերտ կուտակումներում: Դրանք հասարակ եւ ջնարակապատ տարաբնույթ կավանոթներ են, առավելապես խոհանոցային գործածության: Ըստ կիրառության հասարակ խեցեղենը տարբերակվում է.

9 **Ս. Տեր-Ներսեսյան**, Հայ արվեստը միջնադարում, Երեւան, 1975, էջ 11:
10 Անդ, էջ 12:

Կարասներ- երկուսն են, մեկը խիստ բեկորային (իրանի, շուրթի փձեռ բեկորներ, ակոսազարդով), մյուսը՝ գրեթե ամբողջական (բացակայում են փափակ նստուկն ու իրանի որոշ բեկորներ): Կարասն ունի հեքաքրքիր հորինվածք, պարզ ու գեղեցիկ հարդարում (նկ.8): Այն արտաքուստ բաց կարմրադարչնագույն է, գնդաձեռ իրանով, կարճ վզով, ոչ լայն բերանով, դեպի դուրս ծալվող շուրթով, ժապավենաձեռ փափակ պսակով: Իրանը հարդարող զարդապարարերն են. վերադիր սահող ալիքազարդը, կենտրոնով շուրջանակի անցնող ժապավենաձեռ զարդագոտին, հարդարված փորագիր բեկբեկվող գծաքաշ զարդերով, որոնք կրկնվում են եռ ուսի վրա, իսկ ներքնամասում, նստուկից վեր, փորագիր գծաքաշ գոտիներ: Կարասը (չափերը. բարձ. 60սմ, իրանի շրջ. 168սմ, հատակի տրբ. 75սմ, բերանի տրբ. 28սմ) ամենայն հավանականությամբ, օգտագործվել է իբրեռ գինու տարա: Նման անոթներ, այլ հարդարմամբ, բայց նույն նպատակի, հայտնի են թե Հայաստանում, եռ թե հարեռան երկրներում (Դվին, Անի, Գառնի, Արմավիր, Օրան-Կալա եռ այլն): Թվագրվում են ԺԱ-ԺԴ դդ.:[11]

Կճուճներ-մրապատ, ուռուցիկ, երբեմն գնդաձեռ իրանով, կարճ վզով, դեպի դուրս փռվող լայն պսակով անոթներ են, հարդարված ակոսազարդերով: Խեցին կարմրավուն կամ դեղնավարդագույն է, մի փոքր ծակոտկեն, բայց համասեռ եռ խիտ: Թրծումը համաչափ, համեմատաբար հաստապատ՝ 7-8մմ:

Քրեղաններ- կարմրափայլ, բարակապատ, դեպի դուրս փռվող ժապավենաձեռ պսակով, օղակավոր ոտք-նստուկով, ոչ շատ խոր անոթներ են, զարդարված՝ վարդակազարդով: Նրբակերտ են, բայց ոչ նրբախեցի: Խեցին ծակոտկեն է, բայց խիտ, կավը մանրահատիկ, թրծումը հիմնականում համաչափ (պատի հաստ. 5-8մմ, պսակի լայն. 10-12մմ): Պատահում են եռ բեկորներ, հարդարված իրանի վրայով անցնող գծաքաշ զարդագոտիներով:

Գավաթներ- արտաքուստ՝ կարմրափայլ, ներքուստ շիկավուն: Բարակապատ են, նրբակերտ, դեպի դուրս փռվող գեղեցիկ պսակով, վարդակազարդ կամ ակոսազարդ: Կավը մանրահատիկ է, խեցին թեթեռ, երբեմն մի փոքր ծակոտկեն, պատրաստված դուրգի վրա: Պատի հաստ. 4-7մմ, պսակի լայն. 10-15մմ: Թրծումը համաչափ:

Սափորներ-շուրթերի, վզի, իրանի եռ նստուկի բեկորներ են: Հանդիպում են եռ բռնակներ: Վառ կարմրա-աղյուսագույն են, երբեմն դեղնավուն, ներքուստ վարդագույն: Կավը մանրահատիկ է, թրծումը համաչափ: Սափորներից մեկն ունի շեփորաձեռ բերան: Սակայն բեկորների այս խմբում առանձնանում են մի քանիսը, որոնք որակապես տարբերվում են մյուսներից: Բարակապատ են, նրբախեցի, խեցին թեթեռ, թրծումը՝ բարձրակարգ: Ունեն լավ կոկած մակերես, պատած նույն կավի շփոթով կամ բաց կաթնավուն անգոբով: Հարդարված են փորագիր ակոսազարդերով: Ըստ ամենայնի ներմուծված են: Չի բացառվում, որ բերվել են Անիից:

Սակավ հանդիպող բեկորներից են սկուտեղի, տաշտի եզակի բեկորները: Վառ կարմրավուն են, հաստապատ, դեպի դուրս փռվող պսակով: Կավը ծակոտկեն է: Արտաքուստ կոկած են: Տաշտի բեկորը շուրթից ներքեռ հարդարված է ակոսազարդերով:

Սկուտեղն, ամենայն հավանականությամբ, պատրաստված է դանդաղ պտտվող ձեռքի դուրգի վրա:

11 **Ն. Պետրոսյան**, Գառնին IX-XIVդդ., Երեռան, 1988, էջ 52:

Կավանոթները կարելի է թվագրել ԺԳ-ԺԴ դդ.: Այդ են փաստում բազում զուգահեռները Հայաստանի հնավայրերից (Դվին, Անի, Գառնի, Եղեգիս, Արտաշատ եւ այլն)[12]:

Ջնարակապատ անոթների բեկորները փոքրաթիվ են: Ունեն դեղնավուն հենք, հարդարված նկարեն, փորագիր (կանաչավուն) բուսազարդերով ու երկրաչափական հարդապարերերով եւ վերաբերում են ԺԱ-ԺԳ (նկ.9):

Զարդարանքի եզակի նմուշ է ապակե խոշոր ուլունքը (աչքի), գեղեցիկ հարդարմամբ (նկ.10): Մուգ սեւ հենքը զարդարում են մանր ու խոշոր ակնաբիբերը՝ շրջանակված դեղին, կարմիր, սեւ, կաթնագույն շրջաններով: Նման ուլունքները ոչ միայն զարդ էին, այլեւ հուռութք, պահպանակ-հմայիլ, չար աչքից հեռու պահելու համար[13]:

Հետաքրքիր է եւ սելադոնե բեկորի առկայությունը փարածքում: Սելադոնե անոթներ գերազանցապես ներմուծվում էին Հյուսիսային Չինաստանից, առեւտրական ճանապարհներով եւ շատ թանկ արժեին: Թվագրվում են ԺԳ դ. (Անի, Դվին, Գառնի)[14]: Խեցեղենի առկայությունը եկեղեցու փարածքում նշանակում է, թե ԺԱ-ԺԳ դդ. այդտեղ ժամանակավոր բնակություն են հաստատել մարդկային փոքրաթիվ խմբեր, զուցե եւ հոգեւորականներ, մենակյաց ճգնավորներ եւ կամ փախստական բնակիչներ:

Մաքրման աշխատանքներն ավարտվեցին, կատարելով իրենց խնդիրը, չունենալով ընդլայնվելու հնարավորություններ: Կարծում ենք Ս. Թարգմանիչ եկեղեցու վերականգնմամբ կատարվում է մեծ եւ շնորհակալ աշխատանք, արժանի խոնարհումի ու մեծ հարգանքի, բոլոր այն մարդկանց նկատմամբ, որոնք իրականացնում են այդ սրբազան ու նվիրական գործը:

---

12 **Kalantaryan A., Karakhanyan K., Melkonyan H., Petrosyan H., Hakobyan N., Babayan F., Zhamkochyan A., Nawasardyan K., Hayrapetyan A.,** Aremnia in the context of East and West, Ceramics and glass, Yerevan, 2009, pl. XLIV, XLV, XLVI-1.6.8, XLVII, XLVIII.

13 Տե՛ս **Ա. Իսրայելյան**, Հայկական պահպանակները հայոց հավատալիքների համակարգում, սեղմագիր, Երեւան, 2006, էջ 11-12:

14 Տե՛ս **Ա. Ժամկոչյան**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX-XIVդդ., ՀՍՀ, 10, Երեւան, 1981, էջ 121, **Հ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 82-83: